ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի փետրվարի 13-ի N 129-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված ««Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևան քաղաքում:

2. Համաձայնագրի ընդհանուր նպատակն է՝ երկու պետությունների միջև բարեկամական և համագործակցային կապերն ամրապնդելը, ինչպես նաև Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեությունը կանոնակարգելը:

3. Համաձայնագիրն ունի հավելված, որը պարունակում է Կատարի Պետու-

թյունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ՝ աշխատանքային պայմանագրի տիպային օրինակը:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերից մեկի կողմից դիվանագիտական ուղիներով մյուս Կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից, որով Կողմերը միմյանց տեղեկացնում են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերն ավարտելու մասին:

Դիմումին կից ներկայացված Արտաքին գործերի նախարարության Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ 2024 թվականի հոկտեմբերի 15-ի դրությամբ կատարական կողմից չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

5. Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կողմերի իրավասու մարմիններն սկսում են Համաձայնագրի իրականացման ընթացակարգերը Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

6. Դիմումին կից ներկայացված՝ Համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման հիմնավորման համաձայն՝ «Համաձայնագրի վավերացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 1.1 կետից. մասնավորապես՝ «Կառավարությունը նպաստելու է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, ներառյալ հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգության ապահովմանը»: Ըստ նույն հիմնավորման՝ «Համաձայնագրի վավերացումը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարության 6-րդ գլխով նախատեսված ռազմավարական նպատակ 4-ից. մասնավորապես՝ նպատակ 4.1-ով նախատեսվել է ունենալ զարգացած միգրացիոն համակարգ»:

7. Դիմումին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ Համաձայնագրի վավերացումը/հաստատումը կնպաստի Կատարի Պետությունում ներկայումս աշխատող Հայաստանի Հանրապետության տասնյակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կկանոնակարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Կատարի Պետությունում աշխատանքի անցնելու ողջ գործընթացը՝ այդպիսով հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցներին՝ տիրապետելու ամբողջական տեղեկատվության՝ Կատարում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թվի, որակավորման և աշխատանքային պայմանների վերաբերյալ:

8. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

8.1. նախաձեռնել բոլոր անհրաժեշտ միջոցները, որ Կատարի Պետությունում աշխատել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար հեշտացվեն բժշկական զննության ընթացակարգերը, անձնագրեր և ուղևորության թույլտվություն ստանալը, և որ այդ քաղաքացիներին տրամադրվեն տեղեկություններ Կատարի Պետությունում աշխատանքային պայմանների, ծախսերի և կենսամակարդակի վերաբերյալ (հոդված 5, մաս 1),

8.2. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքագրումը և Կատարի Պետություն մեկնելու նախապատրաստումը համապատասխանեն երկու երկրներում գործող համապատասխան օրենքներին և ընթացակարգերին (հոդված 5, մաս 2),

8.3. ապահովել, որ Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության հմտություն ունեցող քաղաքացիներն ունենան անհրաժեշտ որակավորումներ այն աշխատանքը կատարելու համար, որի համար հավաքագրվել

են (հոդված 5, մաս 3),

8.4. ապահովել, որ մինչև Հայաստանի Հանրապետությունից մեկնելը Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունենան աշխատանքի առաջարկ, որը պատշաճ կերպով ստորագրված կլինի Կատարի Պետության գործատուի կողմից և հաստատված կլինի Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության կողմից (հոդված 5, մաս 4),

8.5. ապահովել, որ մինչև մեկնելն աշխատողներին տրամադրվի պատշաճ ցուցում/կողմնորոշում աշխատանքի ընդունման հետ կապված համապատասխան օրենքների, կանոնակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի, նորմերի, մշակույթների և գործելակերպի վերաբերյալ՝ Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության աջակցությամբ և վերջինիս կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա (հոդված 5, մաս 5),

8.6. ապահովել, որ Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բավարարեն պայմանագրի կողմ հանդիսացող Կատարի Պետության գործատուի պահանջները և կարիքները (հոդված 5, մաս 6),

8.7. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Կատարի Պետություն աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավական պաշտպանությունն ապահովելու համար՝ երկու երկրներում գործող համապատասխան օրենքների և ընթացակարգերի համաձայն (հոդված 5, մաս 7),

8.8. չօգտագործել Համաձայնագրով ձեռք բերված որևէ անձնական տվյալ Համաձայնագրի հետ անհամատեղելի նպատակներով, ինչպես նաև ձեռք բերված տվյալները չտրամադրել երրորդ կողմին, բացառությամբ այդ տվյալները տրամադրած կողմի նախնական գրավոր համաձայնությունն ստանալուց հետո (հոդված 7),

8.9. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Կատարի Պետության իրավասու մարմինների հետ փոխհամաձայնեցված ընթացակարգով փոխանակեն տեղեկություններ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենքների և ընթացակարգերի մասին (հոդված 12, մաս 2),

8.10. որպես ուղարկող Կողմ՝ կրել Համաձայնագրով նախատեսված պատվիրակությունների այցելությունների ծախսերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան դրույթների (հոդված 14):

9. Համաձայնագրի դրույթների կատարման համար իրավասու մարմիններն են.

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,

բ) Կատարի Պետության կառավարության կողմից՝ Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարությունը:

10. Համաձայնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի իրականացման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվում է Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համատեղ համակարգող հանձնաժողով: Յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները նշանակում են համատեղ համակարգող հանձնաժողովի երեք անդամի:

11. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքագրումը, նրանց մուտքը Կատարի Պետություն և այնտեղ աշխատանքային գործունեությունն իրականացվում են Կողմերի պետություններում գործող օրենքներին, կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն կարող են ուղեկցել նրա ընտանիքի անդամները՝ համաձայն Կատարի Պետության ազգային օրենսդրության:

12. Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացու աշխատանքային պայմաններն ու ժամկետները՝ ներառյալ աշխատավարձի չափը, սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացու և գործատուի միջև Համաձայնագրին կից հավելվածով նախատեսված տիպային օրինակին համապատասխան կնքվող անհատական աշխատանքային պայմանագրով: Պայմանագիրը

ներառում է Պայմանավորվող կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները՝ Համաձայնագրի դրույթներին և Կատարի Պետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

13. Համաձայնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի իրականացման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվում է Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համատեղ համակարգող հանձնաժողով: Յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները նշանակում են համատեղ համակարգող հանձնաժողովի երեք անդամի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1777